Հասմիկ ԳԱԼՍՏՅԱՆ

ՍԱՏԱՆԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ժողովրդական զրույցը վիպական բանահյուսության տարածված տեսակներից է: Զրույցները ոչ մեծ ծավալի պատումներ են, մեկդրվագանի պատմվածքներ, որտեղ ժողովրդական լեզվին բնորոշ պատմելաոճով ներկայացվում են ժողովրդի պատմական ու կենցաղային անցուդարձերը և սնահավատական պատկերացումները: Սնահավատական զրույցները հեթանոսական և քրիստոնեական հավատալիքների հետ կապված ոգեղեն արարածների և գերբնական երևույթների, առարկաների մասին պատմվող բանավոր պատմություններ են, ոչ հեքիաթային արձակ ժանրի ստեղծագործություններ: Վերջիններս իրենց ձևով, բնույթով և կենցաղավարման եղանակով խիստ տարբերվում են վիպական բանահյուսության մեջ մտնող մյուս բոլոր ժանրերից:

Սնահավատական զրույցը պատմողներն ու լսողները հավատում են դրանց բովանդակությանը, ներկայացնում իբրև իրենց և իրենց մտերիմների կամ ծանոթների հետ կատարված իրողություն: Զրույցը պատմվում է ասացողի կամ ասացողին հայտնի մարդու անունից: Սնահավատական զրույցները հիմա էլ կենսունակ են և կենցաղավարում են Հայաստանի մի շարք ազգագրական շրջաններում: Սույն աշխատանքը կատարված է 19-րդ դարի 2-րդ կեսից մինչև արդի գրառումներում առկա սնահավատական զրույցների հիման վրա: Հոդվածի համար որպես սկզբնաղբյուր օգտագործվել են վերջին տարիներին կատարված բանահյուսական գրառումները, «Ազգագրական հանդես»-ում[1], «Հայ ազգագրություն և բանահյուսություն»[2] մատենաշարում առկա տպագիր նյութերը, Գ. Սրվանձտյանցի[3], Գ. Հովսեփյանի[4], Յ. Ճանիկյանի[5], Աղ. Մխիթարյանցի[6], Ե. Լալայանի[7], Մ. Աբեղյանի[8], Մ. Կռայեանի[9], Վ. Սվազլյանի[10], Գ. Գյոզալյանի[11] և այլոց ժողովածուներում տեղ գտած սնահավատական զրույցները, ինչպես նաև Ա. Ղազիյանի հոդվածը[12]:

Մեր օրերում շատ են տարածված զրույցներ չար ոգիներից մեկի՝ սատանայի մասին, և սույն հոդվածում ներկայացվում են սատանա-ոգու գործառույթներն ըստ տարածված սնահավատական զրույցների:

Սատանա բառը ծագում է հին եբրայերեն satan բառից, որը նշանակում է ոսոխ, հակառակորդ, թշնամի, հակառակ դիմակաց, չար ոգի, դև: Սատանա բառը փոխառությամբ տարածված է մի շարք լեզուներում՝ ասորերեն satana, ռուսերեն сатана,

---

[1] *Ազգագրական հանդես, գ. IX, 1902,գ. X,1903,գ. XII,1905,գ. XIV, 1906, Թիֆլիս, (այսուհետ՝ ԱՀ):*
[2] *Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8,1978, հ. 10,1980, հ. 12,1981, Եր., (այսուհետ՝ ՀԱԲ):*
[3] *Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Եր., 1978:*
[4] *Գարեգին Սարկաւագ Յովսէփեանց, Ժողովրդագրական նիւթեր, գիրք գ, N 56, Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից, Թիֆլիս 1892:*
[5] *Ճանիկեան Յ.Կ., Հնութիւնք Ակնայ, N 89, Թիֆլիս, 1895:*
[6] *Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Փշրանք Շիրակի ամբարներից, Աղ. Մխիթարեանց, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, ՌՅԾ-1901, (այսուհետ՝ ԷԱԺ):*
[7] *Լալայան Եր., Երկեր, հ. 1, 1983, հ. 2, 1988, հ. 3, 2004, Եր. (այսուհետ՝ ԵԼ):*
[8] *Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Եր., 1975, (այսուհետ՝ ՄԱ):*
[9] *Մեսրոպ Կռայեան, Բալու, Բալուի կեանքէն առնուած պատկերներ, յուշեր, չափածոյ քերթուածներ եւ արձակ էջեր, Անթիլիաս-Լիբանան, 1965:*
[10] *Սվազլյան Վ., Կիլիկիա, արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., 1994:*
[11] *Գյոզալյան Գ., Մուսա լեռան ազգագրությունը, Եր., 2001:*
[12] *Ղազիյան Ա., Հայ ժողովրդական սնահավատական զրույցների դասակարգման հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, N 8, էջ 78:*

արաբերեն šaytan (շայթան), եբրայերեն sadatan, հունարեն Satanas, լատիներեն satanas, հարավսլավերեն sotona, գերմաներեն satan և այլն: [13]

Ե. Լալայանը, խոսելով Ջավախքի հայ ժողովրդի հավատալիքների մասին, ներկայացնում է մի ավանդություն սատանա-ոգու առաջացման մասին. «Աստված ստեղծել է ինը դաս հրեշտակ՝ մարդակերպ, թևավոր, աներևույթ, բարի էակներ, որոնց պաշտամունքն էր փառաբանել Երրորդությունը և կատարել նրա հրամանները: Սակայն այս ինը դասից երկուսն ամբարտավանացել են և ցանկացել աստված դառնալ: Տերն անիծել է նրանց, և սրանք երեք օր շարունակ կարկտի պես երկնքից վայր են թափվել: Յոթ դաս հրեշտակները խնդրել են ողորմիլ և «Տեր ողորմեա» են ասել, իսկ մարդիկ զարհուրած «Կեցո՛, Տե՛ր» աղաղակել: Այս երկու դասը վայր թափվելիս երեք դասի են բաժանվել, մին՝ Պեղծեոն, որ մնացել է երկնքի և երկրի միջև, մյուսը՝ Սաքայել, որ իջել է երկրիս վրա, և երրորդը՝ Լեկեոն, որ անցել է անդունդը: Աստված անօրինել է, որ այս վայր թափված հրեշտակների տեղը լցնեն բարի մարդկանց հոգիները, ուստի և այս հալածված հրեշտակների երեք դասերն էլ բարի մարդկանց սաստիկ թշնամացրել են և ամեն կերպ աշխատում են մոլորեցնել նրանց: Սաքայելը «բաց աչքով»՝ ակնհայտնի է խաբում մարդկանց ու գրում գործած մեղքերը: Լեկեոնը չար երազներով ու տեսիլքներով է մոլորեցնում, իսկ Պեղծեոնը կարում է հոգիների ճանապարհը, և եթե «փառության ձեռագիր» չունեն, քաշում տանում է դժոխք, սատանաների ու մեղավորների կայանը, ուր ոսկի աթոռի վրա նստած թագավորում է Լեկեոնը: Ժողովուրդն այս վայր թափված երեք դաս հրեշտակներին կոչում է սատանա...»[14]:

Նույն ավանդությունը, որոշ տարբերություններով, հանդիպում ենք Գ. քահանա Նժդեհյանի մոտ. «Աստուած հրեշտակները ստեղծած ժամանակ՝ տասներկու դասի կամ գունդի բաժնեց զանոնք: Այս գունդերեն երեքի գլխաւորները՝ Սաղթաէլ (Սադայէլ), Բէհեզէբուղ և Բէլիառ (Բէլիար) տեսնելով իրենց բարձրութիւնը ու փառքը՝ հպարտացան ու Աստուծոյ դէմ ապստամբեցան: Աստուած բարկացաւ, և զանոնք իրենց գունդերով իր «երեսէն»-ներկայութենէն թափեց դէպի Սանդարամետը՝ ի պատիժ իրենց ամբարտաւանութեան»[15]: Ըստ Լոռու (Բորչալուի գավառ) ժողովրդական հավատալիքների՝ սատանաների գլխավորը համարվում է Բեյլարը, որի որդին կոչվում է Սաթիել, իսկ աղջիկը՝ Նարմադուշիկ[16]:

Հայ ժողովրդական սնահավատական զրույցներում սատանա ոգին հիմնականում հանդես է գալիս «սատանա» ընդհանուր անվամբ: Սակայն որոշ ազգագրական շրջաններում (Նոր Նախիջևան, Շիրակ, և այլն) սատանա-ոգուն անվանում են նաև մեզմեն աղեկներ, մեզնից լավեր, քան զմեզ աղեկներ, աղեկանք (Ակն) և այլն: Գր. Գյոզալյանը գրում է, որ «Մուսալեռում չար ոգուն՝ սատանային, խոսակցության ընթացքում երբեմն «Քան զմեզ աղվեյր» (մեզնից լավը) ասում էին, բայց անունով նրան չէին հիշատակում»[17]: Հավանաբար սատանային այսպիսի անվանումը (դու մեզանից լավն ես) տրվել է որպես սիրաշահություն՝ զերծ մնալու համար նրա չարագործություններից: Մ. Աբեղյանը այս առիթով գրում է. «Թեպետ սրանք այսպես մարդկային ծագում ունեն և անգամ աստվածային անեծքի տակ են գտնվում, այդուհանդերձ նրանք վեր են կանգնած մարդկանցից: Դրա համար էլ նրանք հաճախ կոչվում են մեզանե լավեր կամ մեզնե աղեկներ: Եթե նրանց չարքերին հավասար դասեն և չարքեր կոչեն, ա-

[13] Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Եր., 1979, էջ 179:
[14] ԵԼ, հ. 1, էջ 215-216:
[15] ԱՀ, գ. IX, էջ 267:
[16] ԵԼ, հ. 3, էջ 209:
[17] Գյոզալյան Գ., նշվ. աշխ., էջ 230:

պա նրանք կզայրանան և վրեժխնդիր կլինեն»[18] (ընդգծումը մերն է-Հ.Գ):Արցախում, Սյունիքում, Վարանդայում սատանան ու քաջքը նույնանում են[19]: Հարք-Բուլանըխում ու Համշենում սատանային փերի[20] են կոչում, նաև ալ[21], իսկ Ղզլարում՝ աչք[22]:

Ե. Լալայանը սատան-ոգու աներևույթ լինելու հանգամանքը բացատրող մի զրույց է ներկայացնում. «Երբ Քրիստոսի մայրն ու մորաքույրը (Եղիսաբեթ) Փրկչի գերեզմանի վրա ողբում էին՝ գլուխները քաշ գցած և առանց շուրջը նայելու, սատանաները, որ մինչև այդ ժամանակ մարդկանց մեջ էին ապրում և նկատելի էին, կամենալով սրանց ուշքը ուրիշ բանի վրա դարձնել, որպեսզի մոռանան Տիրոջը, պարկերի մեջ պղնձե ամաններ էին ածել և նրանց առաջ կանգնել, թխկթխկացնում էին: Աստվածածինը ետ է նայել և տեսնելով սատանաներին՝ անիծել է, թե՝ «աներևույթք ըլիք», և այդ օրվանից նրանք աներևութացել են, այլևս մարդկանց չեն երևում»[23]:

Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում գրառած հայ ժողովրդական սնահավատական զրույցներում սատանան ունի արտաքին տեսքի գրեթե միևնույն նկարագիրը, իհարկե, առկա են նաև տարբերությունները: Ըստ շիրակցիների՝ սատանան «մարդու պես է, հմա մարդ չէ, ինքը սև, էրկու չաթալ կոտոշ ու մանտր բիզբիզ անկաջներ ունի, պոչը բարակ ու կեռ է, ոտները թարս, ոտից գլուխ փուչոտ մազի մեջ կորել է, մանտր- բզով ծակած աչքերը կրակ գլմանի…»[24]: Ջավախքում սատանային պատկերացնում են «մարդակերպ, թևավոր, բոլորովին սև, մազով ծածկված, երկար ագիով, կռունկները դեպի առաջ ուղղված, ոմանք էլ մի կամ երկու եղջյուրով»[25]: Ըստ ալաշկերտցիների «սատանաները թև չունին, որովհետև թափած են անոնք, երբ Աստուած իր երեսէն վար ձգեց, բայց հրեշտակներու պես կրնան ամեն տեղ պնդել ու ել և էջ ընել, հրեշտակներու արագութեամբ: Իրենց տեսքը, կերպարանքը չափազանց տգեղ է, սև, խաւարապատ, դուրս ցցուած ու բարակ այտերով, քթով ու շրթունքներով: Բարակ ու փոքր են նոյնպես ձեռքերը, ոտքերը: Կռունկները դեպի առաջ, և ոտքի ճիտք ու մատները դէպի ետ դարձած: Ունին նաև բարակ ու երկայն պոչ՝ վտիտ կռնակի վրայ ոլորուած, ինչպէս կտեսնու պատկերներու մեջ: Այս այլանդակությունները ստացած են Աստծու անեծքով»[26]: Մուսալեռցիների պատկերացմամբ նույնպես սատանան «մարդու կերպարանք ուներ, մազերը ցից-ցից, կոտոշավոր էր, պոչավոր և մի քիչ կուզիկ, ոտքերը բարակ, կազմվածքը՝ անճոռնի: Նրանք մեկը մյուսից չէին տարբերվում»[27]:

Ազգագրական որոշ շրջաններում իրարամերժ կարծիքներ ու պատկերացումներ կան սատանայի սեռի ու տարիքի վերաբերյալ: Արդեն նշվել է, որ սատանան նախկինում հրեշտակ էր, իսկ հրեշտակները, դարձյալ ըստ ժողովրդական պատկերացումների, ավելի շատ արականի հանգամանք ունեն, քան իգականի, չունեն մահ, ծնունդ, տկարություն[28]:

Ջավախցիների պատկերացմամբ սատանաները երկու սեռի են, որդեծնությամբ աճում ու բազմանում են, երբեք չեն մեռնում[29]: Իսկ Ալաշկերտում լրիվ հակառակ

---

[18] ՍԱ, հ. Է, էջ 86:
[19] ՀԱԲ, հ. 12, էջ 63: ԵԼ, հ. 2, էջ 177: Ա. Ղազիյան, նշվ. աշխ., էջ 78:
[20] Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 45:
[21] ԱՀ, գ. XIV, էջ 137:
[22] ՀԱԲ, հ. 10, էջ 66:
[23] ԵԼ. հ. 3, էջ 209:
[24] ԷԱԺ, էջ 168:
[25] ԵԼ, հ. 1, էջ 216:
[26] ԱՀ, գ. IX, էջ 267-268:
[27] Գյոզալյան Գ., նշվ. աշխ., էջ 230:
[28] ԱՀ, գ. IX, էջ 265-266:
[29] ԵԼ, հ. 1, էջ 216:

պատկեր ենք տեսնում. այստեղ սատանաները «հրեշտակներու պես աւելի արականի հանգամանք ունին, քան իգականի, թէև յաճախ կնոջ կերպարանքով կը յայտնուին, և այն աւելի պառաւ կնոջ: Չպետք է շփոթել փերիները սատանաներու հետ, որովհետև առաջիններու ծագումը շատ ուշ եղած է, կրնան կենակցիլ մարդերու հետ և զաւակներ ունենալ, սատանաները զուրկ են այդ յատկութիւնէն, ո՛չ ծնունդ ունին, ո՛չ մահ, ո՛չ հիւանդութիւն և ո՛չ մարմնական աճում, ո՛չ կուտեն և ո՛չ կը հագնեն: Առնք հրեշտակներու նման հաճախ հրաշագործ են»[30]: Ղլյարցիների պատկերացմամբ, եթե սատանան դեմքով տղամարդ էր, նրա ոտքերը սմբակավոր պիտի լինեին, եթե կին՝ պոչ և երկար մազեր[31]: Մուսալեռցիները սատանաներին պատկերացնում էին միշտ չափահաս տարիքում, ծեր կամ երեխա չկար: Սկզբից ինչքան որ եղել են, նույնն էլ մնում են, այսինքն՝ աճ չունեն: Մարդկանց հետ ոչ մի կարգի (սեռային և այլ)[32] կապ ու առնչություն չունեն[33]: Ակնում «աղեկանք սովորաբար ի կերպարանս կնոջ»[34] են հայտնվում:

Արճակում սատանաները երեխաներ ունեին, որոնց պուպուշիկներ էին անվանում: Վերջիններս պատկերացվում էին թխամորթ, խիտ-գանգրահեր, հաստապոչ, ճրագի նման փայլուն աչքերով, գզգզված հանդերձներով մանուկներ[35]: Շիրակում ևս սատանաները երկու սեռի են, հազվադեպ հանդիպում ենք տղամարդու, իսկ հաճախ՝ կնոջ կերպարանքով: Ըստ շիրակցիների սատանան մոտ քառասուն-քառասունհինգ տարեկան արարած է, չի ծերանում: Շիրակում մեր կատարած բանահյուսական գրառումներում սատանան հիմնականում կին է, միջին տարիքի, աշխատասեր, քչախոս, համեստ արարած: Զրույցներից մեկում սատանան ներկայացվում է Նորաշենցի Ժենոյի կերպարանքով. *«Մեր գեղի (Նորաշեն, Արթիկ) Ալիկենց Ենովքը Եզանկարա (Արևշատ) ջախճբան էր: Էդիկ մենակ ջաղաձը կեղնի, էդ օրը աղուն աղցող չի էղնի, նստած կսպասէ: Կըսէ, մեզ է աշէմ, օր ջաղաձի քարի տըգեն, էն փէտն օր կըֆըռցնէ ջուրը, ըդոր տըգեն հարսնիք գէլնի, եղնաղ: Կսէ, էգան, բոլորս բըռնին ու խաղցան: Ես, կըսէ, փշաքաղվա, տեսա, օր մեգը մազերս կքաշէ, մեգը հ'անգաձս կքաշէ, մեգը ոդով կզարգէ, կըսէ, քովս մէ բուլավկեմ կար (առաջ գյաղայախա են հակէ, կոճակ, բուլավկա է էղէ վրեն), հանի ու զարգի մեգի դոշին: Սաղ փախան, ըսիկ քըռտ կայնավ: Լացավ, ըսավ փոքր էրեխա ունիմ, թող տուն էրթամ: Կըսէ չէ, հ'անգաձս քաշողը դու չէ՞իր: Դէ, ընգի եդնես, տուն բղի էրթանք: Կէրթա, ջաղաձը կփագէ ու ըդոր բերեգը տուն, կըսէ, եկեք, թաժա կընիգ եմ բերէ ընձի: Գեղնին կաշեն, օր մարդ, մարդու լման, մեր գեղի Թերոյենց Վարդի լմանը, մենակ ոդները, կըսէ, կըրընգները մադներու տեղն էին, մադները՝ կըրընգներու: Ուրիշ հեչ մէ տարբերություն չկար, նույն մարդը: Բերեգը տուն: Կընիգը՝ Տիրուհը, կըսէ, դէ ալ Ենովք, կըսէ, էրեխանց մեջը բան-ման չտարածես, օր վախենան, ես առավոդը սաղին կհավաքեմ, կբացատրեմ, օր ըսիկ չարք է, գործ չունիք հետը: Ինչ օր ինքը կենէ՝ հազարագը բղի ըսես իրան, չըղի ըսես՝ էրա՛, կէ՛ր, բղի ըսես՝ մի՛ էրա, մի՛ կէր, օր էնէ: Էդոր իրեք տարի կպայնէ. գոմերը կալվեր, կովերը կկթեր, կաթը բերեր վեդրոյով կուդար, անուն, կըսէ, հեչ մէ բառ չէր խոսի, ինչ օր իրան կհասնիր,*

[30] ԱՀ, գ. IX, էջ 268:
[31] ՀԱԲ, հ. 10, էջ 66:
[32] Ռուս բանահյուսության մեջ սատանան զայթակղում է կնոջը, մղում նրան ինքնասպանության...
Э. Померанцева, Мифологические персонажи в русском фольклоре,М.,1975, стр. 122.
[33] Գյոզալյան Գ., նշվ. աշխ., էջ 231:
[34] Ճանիկեան Յ.Կ., նշվ. աշխ., էջ 152:
[35] ՀԱԲ, հ. 8, էջ 89:

ինքը գիդեր, գըլներ, կըներ: Կերտար դըրող կնատեր, կըսե, մենք հացը կուդեինք, ինքը գըլնիր հոռ ձեռով կլցներ, իշկան օր իրան պետք էր, կուդեր, ամանը կըվար, ըղըն-գըլնիր հոռ ձեռով կլցներ, իշկան օր իրան պետք էր, կուդեր, ամանը կըվար, ըդըն-գով էլ ըսպես պըռունգը կջարդեր, տանիր կդներ տեղը: Մէ օրըմ Եռավքը հարսնե-րին կըսէ՝ ելե՛ք, գնացե՛ք կալը, տունը կմնան 11 տարեկան ախճիգն ու սաղանեն: Սաղանեն գըլնի, տեղը կշինե, ճաշ-մաշ չի էփե, ինքը ըդպես բաներու հետ գործ չու-ներ: Ախճիգը ջուր կդնե վեդռով, օր իրա դըրոցի շորերը լվա, սաղանեն կըսե կթողա՞ս ոդներս լվամ, ըսիգ կսե, դե՝ հա: Կսե, փեշիս բոլորը բուլավկա, ասեղ կա շարած, քանե՞ն, օր ոդներս չծակըռտե: Էս ախճիգը չի գիդենա, իստակ քանե, քանե քիմի, գըլնի կըսե. Իշկան ալուր ունենաք, տարին քառսուն մեշոկ ալուր բերեք՝ չա-խողը հալղի տները ման գա, դարդակ մնա, իշկան աման-չաման ունենաք՝ պռունգ չունենա, ձեզի ըսեն «Չկոց տունն, ու անհայդանագը: Ախճիգը գըլնի ճվագը՝ հար-սի՛կ, հարսի՛կ...: Ժենյա կեղնի անունը, էդ մարտը չիդեմ ինչ լեզվով հարցընեգը՝ անունըդ ի՞նչ է, էսիգ հողի վրա մաղով գրեգը՝ Ժենյա, Ժենիգ, ըշտը Թերոյենց Վարդի լման էր, Վարդն էլ Ժենիգ կգրվեր: Էս ախճիգը լալով կերտա կալը, կըսէ, դէ, քըլէք, Ժեռան չկա, հարսիկը չկա: Գուկան տուն օր՝ դայրեն գեղնին քցած, ասեղներն էլ սեղնին շարած: Տիրունը քաշէ ախճգան՝ լավ կծեծէ: Իշկան օր ես գի-դեմ, ըդոնք չորս տղամարդով կաշխադեին՝ հաց կմուրային, իշկան օր սիպտըկե-դեն կուննեային ծալած, դարսած, բանային, կտեսնեին, օր սաղ արուն էր, սաղանե-կը տանեին արնոդեին, բերեին դնեինգը տեղը: Իշկան բաժակ կար՝ պռունգը չկար, գդալ՝ պռունգը չկար, շերեփ կար՝ պոչը չկար, վեդրո կար՝ կանտերը չկար: Չի-դեցողները կըսեին, թե էս ի՞նչ վերանեա տուն է, կըսեին՝ մեր վրա անեծք կա: Տի-րունին անիծել էր սաղանեն, օր էրեխին ծեծել էր, ըսել էր՝ սաղ կյանքդ կոբերդ վրա չգան, էնիկ սաղ կյանքը աշկերը բաց քնավ: Բոյով, սիրուն հարս էր, ութ տա-րեկան էի, կհիշեմ, ինքը չէր կըռնա ինքնուրույն իրա վրի ասեղները հաներ, բոլորը ժնջիլ քաշեիր կըռ՝ չէր կըռնա միճեն դուրս գար, ըդիգ կապվիգը, մոլըրիգը: Էդ էլ սաղանի պատմությունը, հըըը ».[36]

Կին-սատանայի ծննդաբերության ժամանակ հաճախ մարդ-դայակ են խաբում տանում, որին և վարձատրում են սոխի կամ սխտորի կեղևով ու հալվայով: Սոխի կամ սխտորի կեղևները մյուս օրը ոսկի դրամներ են դառնում, եթե միայն ստացողն անարգելով վայր չի թափել[37]: Այս հավատալիքը տարածված է հիմնականում Ջավախքում[38], Կիլիկիայում՝ Հաճընում[39] և մյուս ազգագրական շրջաններում:

Սատանային վերագրվող մի հատկանիշ ընդհանուր է բոլոր ազգագրական շրջանների զրույցներում. սատանայի ոտքերն ու լեզուն թարս են: Ամեն ինչ անում է իրեն ասվածին, հրամայվածին հակառակ: Ստ. Լիսիցյանի մեկնաբանմամբ «սատանան ամեն ինչ աշխատում է շուռ տալ, քըրսըցնել, չարով խափանել ամեն ինչ: Իզուր չէ, որ նրա ոտքի թաթերն էլ են շուռ տված՝ կրունկներն առաջ, մատները՝ ետ: Քաշքն ամեն ինչ թարս ու հակառակ է անում: Եթե պետք էր նրան ջրի ուղարկել, ապա «ջուր բեր» ասելու փոխարեն պետք էր ասել՝ «կուժը վերցրու և ջարդի»[40]:

---

[36] *Մեր բանահյուսական գրառումներից: Բանասաց՝ Սերվենիկ Կամսարի Ազատյան, ծնվ. 1932թ, Արթիկի շրջան, գյուղ Նորաշեն, ջուխակ:*
[37] *ԵԼ, հ 1, էջ 216:*
[38] *ԵԼ, հ.1, էջ 218:*
[39] *Սվազլյան Վ., նշվ. աշխ., էջ 78:*
[40] *ՀԱԲ, հ. 12, էջ 64:*

Սատանայի բնակության վայրի և մարդկանց երևալու հարցերին վերաբերող տարբերությունները կապված են տվյալ ազգագրական շրջանի բնակլիմայական պայմաններից, աշխարհագրական դիրքից ու տեղավայրերից: Առավել հարթավայրային շրջաններում առկա զրույցներում սատանաներն ապրում են չարդախներում, ջրհորներում, քանդված տներում, վառարանների մեջ, պատերի խոռոչներում, անտառում, գերեզմանատանը, մութ անկյուններում,[41] առուների եզերքին[42], ջրաղացներում, ձիթհանքերում, գոմերում, այրերում և անմարդաբնակ տներում[43]: Մուսա լեռում «նրանք բնակվում էին խավարում, նրանց կենտրոնն էր Գարիզը (փապուղին)»[44]: Արճակում ավանդություններ կան գրառված սատանաների բնակավայրերի մասին: Այստեղ ևս պատկերացնում էին, որ սատանաներն ավելի ազատ ու համարձակ ապրում էին բնակավայրերից հեռու ընկած ավերակներում, մութ ու անմարդաբնակ տեղերում, սակայն ավանդությունը պատմում է, որ «ամենուրեք բնակվող սատանաներն Արճակում ունեին նաև իրենց հատուկ բնակավայրը: Դա գյուղից հեռու, վերևի մասով Աստվածածնա բլուրներին հասած, իսկ ցածի մասով՝ Չնձեմ կոչվող արտերին հասնող բլուրներից մեկի մեջտեղը եղած խոր, քարքարոտ, երկայն կիրճն էր, որը կոչվում էր Գյազնա: Ահա այդ Գյազնան սատանաների բնակավայրն էր: Լեռնային ձնհալներից գոյացած և իր անցած ճանապարհին պարզված մի փոքրիկ առվակ էր հոսում այդ կիրճի միջով: Վերը՝ կիրճի մեջ, կար մի տեղ, որ շատ նեղ էր, և ջուրը ոչ թե հոսում, այլ վիժում էր ցած: Ջրվեժի այդ մասը կոչվում էր Գյազնի խռինչք, ուր զրույցի համաձայն, անհամար սատանաներ էին աղմկում, հազար ու մի ձայնով ողբում ու կաղկանձում: Ո՛չ հովիվներն ու գառնարածներն էին այնտեղ հոտը քշում, ո՛չ կանայք ու աղջիկներն էին Գյազնեն բանջարի գնում, ոչ էլ անցորդներն էին գնում սատանայաբնակ Գյազնայով: Ըստ արճակցիների՝ Գյազնի խռինչքը միշտ էլ լիքն էր անխորտակելի չարքերով, որոնք շատ հեռու վայրերից հալածվել եկել էին թաքնվելու Աստվածածնա զորությունից ու պատսպարվել Գյազնի խռինչքի մեջ: ... Պապերից եկած երկյուղախառն պատումներ կային այն մասին, որ երբ մութն ընկնում է, Գյազնի մեջ ապրող անհամար չարքերը հազար ու մի սատանայական հնարանքներով խաբում են միայնակ ուղևորներին, տանում Գյազնի խռինչքը և այնտեղից քաշում դժոխք: Որդոց-որդի ամրացած այս երկյուղը ստիպում էր դաշտում աշխատող կանանց մութն ընկնելիս չանցնել Գյազնի ձորաբերանով...»[45]: Արճակում սատանայաբնակ էին համարվում նաև գյուղի հարավ-արևելքում գտնվող Վարակյա տներ կոչված ավերակները[46]:

Ե. Լալայանը վկայում է, որ «Դռնավարզի և Քառասանի, ինչպես և Ազռխի և Թաղլարի (Արցախ) միջև կան խոր ձորեր՝ սաղարթախիտ ծառերով ծածկված: Այս ձորերը կոչվում են Քաջկաձոր և լի են քաջքերով՝ սատանաներով»[47]: Ըստ ղարաբաղցիների՝ քաջքերը (սատանաներ) «ամենուր են՝ ջրում, օդում, ժայռերի մեջ, հատկապես մութ անձավներում ու ժայռածերպերում, լքված ջրաղացներում ու ավերակներում: Ավետարանոց գյուղում, մելիքական ղարադամներից վեր բարձրացող մուտքը տանում է քարանձավ՝ քաշկատն[48]: Իսկ «Ղավախան գյուղի Ակորջանը պատմում էր, թե մի օր մի սատանա խաբել է իրեն և տարել սատանաների տունը ցույց տվել: Այդտեղ, ասում է նա, եղել է մի գեղեցիկ մուշտակ, մի յաբա (երկժանի) և մի կույտ ածուխ: Երբ նա հե-

---

[41] ՀԱԲ, հ. 10, էջ 66:
[42] Կռայեան Մ., նշվ. աշխ., էջ 582:
[43] ԵԼ, հ. 1, էջ 216:
[44] Գրիգորյան Գ., նշվ. աշխ., էջ 231:
[45] ՀԱԲ, հ. 8, էջ 88-89:
[46] Նույն տեղում, էջ 89:
[47] ԵԼ, հ. 2, էջ 177:
[48] ՀԱԲ, հ. 12, էջ 63:

տաքրքրվելով հարցրել է, թե ինչի համար են այդ բաները, սատանան պատասխանել է, թե մուշտակը նրա համար է, որ առավոտը ձգեն եկեղեցի գնացող ծերունիների վրա, որպեսզի տաքությունից թուլանան ու եկեղեցի չգնան, յարան՝ որ ձգեն չարը տեսնող և քարու ետևից գնացող երիտասարդների պարանոցը, իսկ ածուխը՝ քսեն իրենց սասծը ուրացողի երեսը»[49]:

Սատանաները հայտնվում են մարդկանց մենակ կամ խմբով, երեկոյան ժամերին՝ մութն ընկած ժամանակ: Ըստ մուսալեռցիների՝ սատանաները «մարդուն երբեք խմբով չէին ներկայանում: Ոչ էլ խմբված մարդկանց էին երևում»[50]: Հայտնվում են միայնակ մարդկանց, հավանաբար այն պատճառով, որ մենին ավելի հեշտ է մոլորեցնել ու գցել իրենց թակարդը: Իսկ Ակնում հավատում էին, որ «Սեզմէ աղէկները սովորաբար կանանց կ'երևան»[51]:

Ըստ հայ ժողովրդական սնահավատական զրույցներում առկա պատկերացումների՝ սատանա բռնելու երեք հիմնական տարբերակներ կան: Ի մի բերելով գրավոր աղբյուրներում և գրական ստեղծագործություններում առկա նյութերը, կատարված արդի գրառումները՝ բազմիցս հանդիպում ենք ձիու վրա կապար քսելու եղանակով սատանա բռնելու տարբերակին: «Օձունում Օսանը, Արդվինում Դավիթ քյոխվանը, Շահալինում Քոչնանց Քոչարը նկատել են, որ իրենց գոմերում ձիերը գիշերը սաստիկ քրտնում են, և մազերը հյուսած են լինում. կապար են քսում ձիերին և բռնում մի-մի սատանա, յոթական տարի աշխատեցնում, հետո արձակում: Սրանք հեռանալիս մի բան էին խնդրել իր վարձ իրենց յոթ տարվա ծառայության, սրանք էլ մի-մի բուռ մոխիր էին տվել, այս պատճառով էլ սրանց աներում երբեք մոխիր չի լինում՝ սատանաները հավաքում, տանում են: Մի նույնանման դեպքից հետո արդվեցի Օթարանը ջուր են տվել, և մինչև այժմ էլ սրանց տանը ջուրը բարաքյաթ չունի, որքան էլ բերեն՝ մի քիչ հետո չքանում է: Իսկ Շնող գյուղում՝ Շաժինենց տանը, գդալ երբեք չէր մնում: Մի օր տեսնում են, որ մի կին եկավ և գդալները հավաքեց, ուզում է տանի: Տան տղամարդը սրտոտ է լինում. վրա է վազում, մի հատ խփում, վայր ձգում կնոջը, թե՝ այդ ուր ես տանում մեր գդալները:

-Ձեր պապը այդ մեզ է տվել,- պատասխանում է կինը և անհետանում: Նոր հարցուփորձ են անում, իմանում, որ իրենց պապն էլ մի սատանա է բռնած եղել, յոթը տարի աշխատեցրել և վերջը մի գդալ նվիրել»[52]: Այս տարբերակը ընդհանրական է ազգագրական բոլոր շրջանների համար:

Մյուսը՝ սատանայի մազերը կտրելու եղանակով իրենց ենթարկելու տարբերակն է: Ուզունլար գյուղում Գորգնանց պապը օջախի մոտից սատանա է բռնում, մազերից մի քիչ կտրում, պահում է: Երբ յոթը տարին լրանում է, սատանան աղաչում է, որ իր մազերը իրեն տան՝ գնա: Սրանք էլ տալիս են»[53]:

Երրորդը՝ սատանային ասեղով բռնելու տարբերակն է: Այս տարբերակը ամենատարածվածներից է և հանդիպում ենք բոլոր ազգագրական շրջաններում առկա զրույցներում: Ակնում հավատում էին, որ «աղեկնաքները չեն բռնուիր, բայց եթե մէկը յաջողի անոնց միոյն կրնակը կամ ձեռքը չհասած կամ չգիտցած տեղ մը ասեղ մի շուլել (կարել), չը կրնար փախչիլ, և ասեղն շուլողն ինչ որ ուզէ անկեց՝ կրերեն ուրիշ կնկան մը սնտուկեն»[54]:

---

[49] ԵԼ, հ. 2, էջ 177:
[50] Գ-յոզալյան Գ., նշվ. աշխ., էջ 230:
[51] Ճանիկեան Յ.Կ., նշվ. աշխ., էջ 152:
[52] ԵԼ., հ. 3, էջ 210-211:
[53] Նույն տեղում, էջ 210:
[54] Ճանիկեան Յ.Կ., նշվ. աշխ., էջ 153:

Սատանայի՝ որպես չար ոգու գործառույթներից մեկը նրա անեծքն է իրեն բռնող, երեք կամ յոթ տարի անվարձ աշխատեցնող մարդուն ու նրա ընտանիքին: Բանասացները հաստատում են, որ սատանաների անեծքները (դառը դատեք, դատարկ նստեք, տանդ հացը կամ ջուրը պակասեն, տանդ մոխիրը պակասի, ամբողջական բաժակ, գդալ, ափսե, կճուճ, շերեփ կամ դույլ չունենաք, աչքերդ բաց քնես, ձեր տունը դեքը պակաս չըլլի) մինչև օրս էլ այդ ընտանիքների վրա են: Սակայն զրույցներից մեկում «Յոթ տարին լրանալիս սատանան դառնում է դեպի Անանյանք և ասում. «Ի՞նչ հիմար մարդիկ եք, յոթ տարի մնացի ձեզ մոտ, չհարցրիք՝ ինչու ջորին չի ծնում, որ ասեի», և անհայտանում է»[55]: Համաձայն մեկ այլ զրույցի՝ սատանան իրեն «կապանքներից ազատող» աղջկան խփում է, «աղջիկը կը դիվահարի, ինքը կխափանվի»[56]:

Սատանաների կենցաղում լայն տարածում ունի հարսանիքը, շատ են այդ թեմայով զրույցները: Տարբեր ազգագրական շրջաններում տարբեր գունավորումներ են ստանում հարսանիքի հետ կապված մանրամասնությունները՝ սկսած հագուստից, երաժշտական գործիքներից մինչև ճոխ ու առատ սեղանները: Մարդը, հիմնականում ջրաղացպանը, հովիվը, միայնակ, պատահական անցորդը կիսաքուն կամ արթուն վիճակում հանկարծ լսում է դհոլ-զուռնայի ձայն, ականատես է լինում ուրախ հարսանիքի, ինքն էլ ակամայից կամ ստիպողաբար ներգրավվում է հարսանիքի մեջ: Ըստ հայտնի զրույցների՝ սատանաները շատ են սիրում հագնել մարդկանց, հիմնականում նորահարսների զգեստները և մասնակցել հարսանիքի: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է զգեստը հանելու ժամանակ խաչակնքել[57], Հիսուս Քրիստոս ասել կամ մեջը նշխարք դնել: Զրույցներից մեկում Ուստա Աթոն սատանայի հարսանիքում նվագելիս նկատում է, որ դրանց հագին իրենց հարևանների հագուստներն են, մեկական կտոր կտրում է շորերից, առավոտյան համեմատում է և համոզվում, որ շորերը սատանաներն էին հագել: Կշտամբում է հարևաններին, թե ինչու հանվելիս Հիսուս ու Քրիստոս չեն ասում, որ սատանաները իրենց «խալավները» չտանեն[58]:

Ջավախքում գրառած մի զրույց մանրամասն ներկայացնում է սատանայի հարսանիքի և հյուրասիրության մի փայլուն օրինակ. «... Քիչմ անցավ՝ մեմ ա դավոլզուռնի ձեն էկավ... Ետև նսաան օր հաց ուտեն, ինձի հետ էկող մարդը մե մենծ լանգյառիմ՝ փլավ լցեց բերեց ինձի, օր ուտեմ: Անոթի փորս վեց-վեց կենե, վրա ընկա, օր ուտեմ: Չանչս կզարնեմ, տանիմ կը բերանս, կաշեմ՝ բան չկա, փորս բան չի էրթա, ըլլի օր, ըսի, քունս գլոխս է, չեմ կրնա ուտի, աչքերս սրբեցի, գյառ-գյուլամիշ էղա, աշեցի օր փլաֆը ալի անպես գլխած առաջս է: Ավուծմ զարկի, տարա բերանս, ծամեմ կը, կենա բերանս բան չկա: Աշեմ՝ անոնք հավար-հավար կուտեն: Ալ ամոթուս ձեն չհանեցի: Մե քիչմ անցավ, ան մարթը լյանգառովմ՝ թիրիթ բերեց: Ըսի՝ աս լավ է, մսերը կտոր-կտոր կառնեմ, կոծեմ կը, բյալքի բերանս բանմ՝ մտնի: Առա մսի կտորը, տարա բերանս, ծամեմ կը, ակռեքս իրար կը դիպչի, ցորեն հատիմ չափ բան ա փորս չի էրթա: Չարասըզ բերանս սրբեցի, անոթի ծառավ ետ քաշվա, անոնք կերան, խմեցին, էլան քիչմ ալ թոան ու քաշվան գնացին»[59]:

Սնահավատական զրույցներից և ազգագրական նմանատիպ նյութերից հայտնի է, որ սատանաները սնվում են հիմնականում հալվայով, խավիծով, ծննդկանների փայծաղով՝ լարդով: Մ. Արեղյանը ներկայացնում է մի զրույց, որտեղ սատանա-

---

[55] ԵԼ, հ. 2, էջ 177:
[56] ՄԱ, հ. Է, էջ 89:
[57] Ռուս բանահյուսության մեջ ևս տարածված է այն պատկերացումը, որ սատանան տանում է այն ամենը, ինչը օրհնված չէ: Померанцева Э.В., Мифологические персонажи в русском фольклоре, М., 1975, ст. 119.
[58] ԵԼ, հ. 1, էջ 218:
[59] ԵԼ, հ. 1, էջ 225:

ներն «իրենց հարսանիքներին մեկի երինջն են մորթում, խորովում և ուտում, իսկ լուսադեմին նրանք միացնում են կաշին ու ոսկորները, և կենդանին ողջ-առողջ տուն է վերադառնում: Դրա մեկ ոտքն է տվորաբար միայն կաղ մնում, քանզի նրանց հարսանիքին հրավիրված և իրենց հետ ուտող-խմող երաժիշտը կամ տափրիչը մի ոսկր է գողանում, որպեսզի տուգի կենդանու հետ նրա ունեցած նույնությունը»[60]:

Խավիծ եփելու համար դնում են կրակին մի կաթսա և շուրջը պտտվելով ասում. «Չքին եղն ու ալյուրը մեջը, չքին եղն ու ալյուրը մեջը»: Կաթսան լցվում է ունեցող, բայց չունիմ ասողների յուղով ու ալյուրով, որը և եփում ուտում են: Բայց նրանք ավելի մարդկանց եփածին են վազում և ուր էլ որ խավիծ եփեն, սրանք գլխին կանգնած են: Եվ որպեսզի համեղ մասն իրենց մնա՝ նրանք տակն են պահում յուղը և թույլ չեն տալիս «դուրս տալու», այսինքն՝ երեսը տարածվելու, սպասելով, որ դրգալը վայր դնեն, իրենք վերցնեն ուտեն: Մարդիկ էլ այդ իմանալով՝ առանց դրգալը վայր դնելու մի սուտ են խոսում, օր. Դուրսը սատիկ կռիվ կա, սատանաները խարվում, վազում են դուրս, այս ժամանակ յուղը դուրս է տալիս, և մարդիկ վերցնում ուտում են[61]:

Ջավախքում պատմում են, որ մայր սատանան բերում է քեհու տղոցկան կնոջ ջիգյարը, «ջյապապ» անում ու կերցնում երեխաներին: Գիշերը չոլում մնացած մեկը, լսելով սատանաների զրույցը, ներս է մտնում նրանց մոտ, մի բուռ մոխիր վերցնում, տանում է քեհենց տուն, դեմ տալիս մեռած կնոջ քթին, կինը կենդանանում է[62]: Ծննդկանի կամ նորածին երեխայի ջիգյարը կամ փայծաղը հանելու և վերջիններիս մահ բերելու մոտիվը տարածված է Ջավախքում, Շիրակում, Ապարանում, Վայոց Ձորում, Արցախում, Նոր Նախիջևանում, Արճակում, Ալաշկերտում և այլ ազգագրական շրջանների սնահավատական զրույցներում:

Սատանան մարդուն մոլորեցնելու, իր չար մտադրություններն իրականացնելու համար բազմաթիվ հնարքներ գիտի և դիմում է դրանց: Աներևույթ լինելուց բացի (այս հանգամանքը նրա չարագործություններն իրականացնելու հիմնական գրավականն է) նա հաճախ տանում է մարդուն ծանոթ կամ բարեկամ մարդու, Արցախում՝ այծի, ճանճի[63], Ջավախքում՝սև շան, մազի[64], Արճակում՝ մարդու, աղվեսի, գայլի, շան, կատվի, ճանճի, մազի և այլ կերպարանքներ: Ըստ Արճակում տարածված զրույցի՝ ջիգյար տանելու ճանապարհվող սատանան գյուղին հասնելիս ընդունում էր շան կերպարանք, ծննդկանի տունն էր մտնում կատվի կերպարանքով, ծննդկանին էր մոտենում ճանճի կերպարանքով և ծննդկանի փորն էր մտնում մազի կերպարանքով, որից հետո արդեն պոկում էր լյարդը[65]: Ըստ Ջավախքում գրառած մի զրույցի՝ սատանան չի կարողանում տանել ծննդկանի ջիգյարը, քանի որ նրա վրա կատու էր պառկած, և մոտենալու պահին աքլորը կանչում է: Որոշում է դառնալ մազ, մտնել խավիծի մեջ, կուլ գնալ և ջիգյարը պոկել: Մարդը, լսելով սատանայի մտադրության մասին, խավիծից հանում է մազը, գցում կրակի մեջ, «ցկեղը կիմանա, մեմ՛ ա անպես ճվճվոցն գըլնի, օր աս խեղճ մարդը էրկու անկճով խլնա կը»[66]: Գ. քհ. Նժդեհյանը, խոսելով Ալաշկերտում գրառած հավատալիքների մասին, գրում է. «Երկրի երեսի վրա գտնվածները (սատանաները) հետամուտ են միշտ մոլորեցնել մարդերը և չար գործեր տալ, մտնելով անոնց խղճի, հոգիի, սրտի, փորի և ուղեղի մեջ, կամ ազդելով ասոնց վրայ, յաճախ

---

[60] ՍՍ, հ. Է, էջ 88:
[61] ԵԼ, հ. 1, էջ 216:
[62] Նույն տեղում, էջ 219:
[63] ՀԱԲ, հ. 12, էջ 63-64:
[64] ԵԼ, հ. 1, էջ 217:
[65] ՀԱԲ, հ. 8, էջ 88:
[66] ԵԼ, հ. 1, էջ 220:

երևնալով մարդուն այլև այլ կերպարանքով, հրապուրիչ տեսքով ու լեզվով, մինչև որ մեռնի մարդը»[67]:

Ինչի՞ց է վախենում սատանան, և ի՞նչ անի մարդը սատանայի չարագործությունններից զգուշանալու և դրանցից խուսափելու համար: Այս երկու հարցերի պատասխաններն առկա են բազմաթիվ սնահավատական զրույցներում և ազգագրական նյութերում:

Շիրակում կարծում էին, թե «Մարդ ուր էրթայ՝ սատանեն հետը կըպտըտի, չունքի մենձ անդամ է: Էդտեղ է, որ շատ անգամ կը տեսնիս՝ դարտակ բանիմ հըմար մարդ զարկէ զարկուի ու մենձ դավի դառաբա կը հանէ, չունքի սատանեն կողքը նստած միշտ կը բոթէ, թե դինջ մի մնայ...: Էդտեղից էլ ջոկ, ջրի՝ ետ թե չէ իշքու (խմիչք) ամանը կիսատ թողիր թե չէ՝ վայն էկաւ քեզի տարաւ: Էն սեաթին սատանէն հա ոտները պտի մէջը կախէ՝ ետ թէ չէ մէջը մտնի լողանայ... էդ ահուց չէ՞՝ օր մէր բէմբուրատ Գէորը թե՛ ջաղացը, թե՛ ձիթիհանքը, թե՛ գոմի մէջ, թէ խարապա տեղըմ օր քնելու էղնի, եօրղանի վրէն՝ ետ թե չէ հախին՝ կոտրած մենձ ասեղըմ կը շուլլէ, օր ինչ է՝սատանէն իրան չմոտենայ: Է՞հ ջանըմ, մարդ սատանի ո՞ր մեկ բանն ըսէ. հազար լռանգ սատանութեն գիտէ. ընդուր հախից գալ ե՞ք կեղնի...»[68]:

Արճակում սատանայի գոյությանը հավատում էր գրեթե ողջ բնակչությունը: Ըստ արճակցիների պատկերացման՝ «սատանաներն ամենուրեք էին և խանգարում էին մարդկանց: Դրանց հաղթահարելու միջոցը խաչակնքումն էր և Հիսուս Քրիստոս ասելը: Պետք է խաչ քաշվեր խմորի, ալյուրի երեսին ու նոր միայն բերանը փակվեր: Պանիրը ամանի մեջ շարելիս պետք է անպայման սկզբից մի մեծ կտոր պանրի վրա խաչ նշվեր և նոր դրվեր ամանի մեջ և այլն: Բոլոր տեսակի ուտելիքներն սկզբից ու վերջից կա՛մ խաչ պետք է կրեին, կա՛մ խաչակնքում, որպեսզի սատանաները դրանց բարաքյաթը չտանեին: Իսկ ամեն տեսակ ուտելիքի ձեռք տալիս, այսինքն՝ մեծ ամանից ուտելիք վերցնելիս պետք է «Իսուս-Քրիստոս» մրմնջային: «Իսուս-Քրիստոս» պիտի մրմնջային գիշեր ժամանակ (մանավանդ մթան մեջ) որևէ շեմք անցնելիս, որպեսզի այնտեղ պահված սատանաները անցնողին չկարողանային խփել...: Բարիքի թշնամի սատանաները Իսուս-Քրիստոսի անունը լսելիս իրը կործանվում են»[69]:

Ըստ Ստ. Լիսիցյանի Լեռնային Ղարաբաղում մարդիկ «Զգուշանում էին, որ գիշերը ոչ ոք չկռանա ու ջուր չխմի առվից կամ աղբյուրից՝ չլինի թե քաշքը քաշի, գցի ջուրը և խեղդի, այդ է պատճառը, որ կռանալուց առաջ պետք է խաչակնքել (Սոս գ.): Չէր կարելի արևամուտից հետո փոխարինաբար մաղ, կշեռք, կրակ տալ, այլապես դրանց հետ կամ ունեցող առարկաներն ու պաշարները կկորցնեին իրենց բարիքը (բարաքյաթը) և արագ կսպառվեին, քաշքը դրանք կթոցներ տնից: Զգուշանում էին, որ մայրամուտից հետո չի կարելի տունն ավլել, թե չէ հանկարծ կդիպչեին սատանային: Եթե խիստ անհրաժեշտ էր ավլել, ապա պետք էր ավելից ծղոտ կոտրել ու գցել կրակը: Նույն պատճառով չէր կարելի տաք ջուրը թափել գետնին, այլ պետք էր մեկ այլ ամանի մեջ լցնել (Թաղլար գ.): Չէր կարելի աղբը շեմքի մոտ թափել, քանի որ այնտեղ քաշքերն են նստած լինում»[70]:

Ապարանցի կանայք նույնպես գիշերը բակը ջուր չեն թափում, որովհետև «ջուրը կարող է թափուել չարիքի սեղանի վերայ և նոքա վրէժ կրնանեն «սև վարոցով» հարուածելով: Պառաւներից մեկը հետևյալ դէպքն էր պատմում այդ մասին.

---

[67] ԱՀ, գ. IX, էջ 267:
[68] ԷԱԺ, հ II, էջ 170:
[69] ՀԱԲ, հ. 8, էջ 88:
[70] ՀԱԲ, հ. 12, էջ 64:

- Ջինք ժամանակ ջուր տարայ, քափեցի դուս. Քիռեր էր ընդունց սեղնին, զարկին գլխուս. Թուխք էրեցին, սաղցացին:

Չարերը ջրի արանք կպտոտին, ասում էր նույն պատաւը, օր մեկ մարդ ընցնի գիշեր վախտ, անուն Հօր և Որդւոյ չէնի, կզարկին սև վարքօվ»[71]:

Ակնում կարծում էին, որ «Աղեկնաքները անվնաս են, բայց երբեմն «չար» կուտան»: Երբ մէկն աղեկնաքի մանկան վրայ կոխէ, որ աներևոյթ լինելով չէր կրնար տեսնել՝ մայր-աղեկնաքն «չար» կըտայ կոխող անձին, որոյ ծնօտն կամ այլ անդամն կը ծռի, խեղանդամ կըլլայ. Կամ կոխող անձն եթե որդանին մեջ երեխայ մի ունի՝ աղեկնաքն ի վրէժխնդրութիւն՝ նոյն հասակաւ աղեկնաքի տգեղ երեխայ մի դնելով նորա տեղ, կը փոխե մարդածնին հետ. Կամ նոյն իսկ կոխողն կը հիւանդանայ: Չար առած անձին՝ «հանտերքի է ըռաստ եկերե կ՛ըսեն»[72]:

Հայտնի է, որ սատանան և չար ոգիներն ընդհանրապես, նախ և առաջ համարվում են ծննդկան կնոջ թշնամի: Մեր խնդիրն ենք համարում ներկայացնել սատանա ոգուց զգուշանալու, նրանից պաշտպանվելու և նրան վախեցնելու համար գործի դրվող հնարքները այնքանով, որքանով դրանք տեղ են գտել հայտնի սնահավատական զրույցներում: Ըստ վերջիններիս՝ սատանան վախենում կամ անհետանում է աքաղաղի կանչից[73], խոզի անուն լսելիս[74], կատու տեսնելիս, երկաթից, պողպատից, խաչակնքելուց, հայր մեր ասելուց[75], Հիսուս Քրիստոսի, Աստվածածնի անունը լսելիս:

Սատանաներից խուսափելու և նրանց վախեցնելու համար բազմաթիվ հնարքներ էին բանեցնում հատկապես Արցախում: Ստ. Լիսիցյանը գրում է. «Քաշկերն ամենից ավելի վախենում էին պողպատե[76] իրերից: Դա, հավանաբար, կապ ուներ այն համոզման հետ, թե պողպատը (հրահանը) ազգակից է կայծակին, քանի որ քարից կայծ է հանում, ծննդի ժամանակ ծննդկանի բարձի տակ պողպատե և երկաթե իրեր՝ իլիկ, դանակ, մկրատ, դաշույն, կողպեք էին դնում, իսկ շեմքին, որտեղ քաշկերն էին նստած՝ շղթա էին գցում: Նույնպիսի պողպատե առարկաներ էին դնում և երեխայի բարձի տակ: Հարսանեկան արջառի (կամ ոչխարի) արյան մեջ թաթախված խոփը, դանակը և բանալին էլ համանման նշանակություն ունեին: Ավագ չարչարանաց շաբաթի ուրբաթ օրը դարբինները պողպատե օղեր էին կռում, որոնք աղջիկները դնում էին մատներին՝ քաշկերից պաշտպանվելու համար (Հադրութ, Թաղլար և այլ գյուղեր): Երեխաների ուսաժապավեններին պողպատե փոքրիկ հրահան էին կարում, որը նրանց պաշտպանում էր չար ոգուց ու կայծակից: Հավատում էին, որ հենց այդտեղ (թիկունքում) է թաքնվում սատանան: Հավատում էին, թե ոչ միայն շնչավոր, այլ նաև անշունչ առարկաները քաշկերից պաշտպանելու համար պետք է դրանց զգեստի գործվածքի մեջ ասեղ խրել կամ լայնագլուխ մեխեր և կամ պայտ խփել դռանը»:[77]

Մուսալեռում նույնպես պողպատյա իրերը, հատկապես սուր գործիքները պաշտպանական ուժ ունեին: «Չարքերը՝ սատանաները, խիստ զգուշանում ու վախենում էին կացնից, մանգաղից, խոփից, դանակից, սրից, թրից, դաշույնից, ասեղից, քորոցից, շամփուրից և այլն: Ծննդկանի գլխատակին անպայման մի սուր գործիք (դանակ, մկրատ) կամ կրծքին ասեղ պիտի լիներ, ինչպես և նորածին երեխայի բարձի

---

[71] *Գարեգին Սարկաւագ Յովսէփեանց, էջ 65-66:*

[72] *Ճանիկեան Յ.Կ., նշվ. աշխ., էջ 153:*

[73] *ԵԼ, հ. 2, էջ 178:*

[74] *Նույն տեղում:*

[75] *ԵԼ, հ. 3, էջ 210:*

[76] *Մետաղները խորհրդանշում են տիեզերական էներգիան՝ կարծր վիճակում: Королев К., Энциклопедия символов, знаков, эмблем, Москва, Эксмо, Санкт-Петербург, Terra Fantastica, 2003, ст. 309.*

[77] *ՀԱԲ, հ. 12, էջ 64-65:*

տակ: Այդ էր պատճառը, որ գյուղի տղաները, գիշերով մի գմբեթով կամ շամփուրով զինված, սատանա էին փնտրում: Պետք էր, որ միայնակ լինեին, որովհետև սատանան երբեք բազմության առաջ դուրս չէր գալիս: Հաջորդ առավոտ տղաները իրար զեկուցում էին, որ ոչինչ չէին գտել: Փորձը տարիներ տևեց, բայց ոչինչ չստացվեց: ՈՉ ահռելիորեն մութ անկյուններում, պուրակներում և այլուր և ՈՉ էլ աղբյուրներում սատանաներ չէին երևում, բայց և այնպես թվում էր, թե դրանք գոյություն ունեն»[78]:

Երվանդ Լալայանը Ջավախքում, Արցախում, Լոռիում բազմաթիվ զրույցներ է գրառել, որոնք ուշագրավ են բովանդակային առումով և առանձին ու կարևոր տեղ են զբաղեցնում մյուս բոլոր սնահավատական զրույցների շարքում: Սատանայի՝ որպես չար ոգու գործառույթները այս զրույցներում խիստ տարբերվում են տարածված ու ընդունված կարծիքներից: Այսինքն՝ հայ ժողովրդական սնահավատական զրույցներում սատանան միշտ չէ, որ չարության հատկանիշներով է դրսևորվում: Այդ հատկանիշներից առաջինն այն է, որ սատանան մարդուն արհեստ է սովորեցնում[79], երկրորդը՝ սատանան օգնում է մարդուն, և երրորդը՝ մարդը հաղթում է սատանային: Լոռիում պատմում են հետևյալ զրույցները, որտեղ սատանան մարդուն արհեստ է սովորեցնում. «Երբ առաջին անգամ ձիթհանք շինեցին, իսկույն չկարողացան ձեթ հանել: Այս ժամանակ սատանան եկավ նրանց մոտ և խոստացավ սովորեցնել ձեթ հանելու կերպը, եթե իրեն էլ մաս տան: Մարդիկ չհամաձայնեցին և շարունակեցին փորձեր անել, բայց անօգուտ: Մի օր էլ, երբ սատանան ներս մտավ միևնույն առաջարկն անելու, ձիթհանքի տերը տաք ջուր ուզեց: Սատանան, այս լսելով, բացականչեց.

-Ի՞նչ, գտա՞ք գաղտնիքը, տաք ջուրը կտավատի վրա՞ պիտի ածեք:

-Այո՛, -պատասխանեց տերը,- վաղուց արդեն գտել ենք գաղտնիքը և կարիք չունենք քեզ մաս տալու»[80]:

Մեկ այլ զրույցում էլ սատանան միամտաբար ասում է, որ ամանները կլեկում են բամբակով, մարդն իմանում է այս գաղտնիքը՝ չխոստովանելով, որ սովորել է սատանայից[81]: Վերը նշված զրույցներում ժողովուրդը սատանային օժտել է այնպիսի դրական հատկանիշներով, ինչպիսիք են բանիմացությունը և միամտությունը:

Սնահավատական զրույցներում երբեմն էլ մարդը դիմում է սատանայի օգնությանը՝ քահանայից վրեժխնդիր լինելու[82], հարստանալու[83], կուզից ազատվելու[84] և այլ նպատակներով և ստանում է վերջիններիս օգնությունն ու աջակցությունը: Ակնում տարածված էր այն կարծիքը, թե սատանան կարող էր մարդուն բարիք բերել: Պատմում էին, որ «Այս ինչ տանն կանայք երբեմն երեք օր, երեք գիշեր մոմ թափեր են աղեկնաց տուրքեն, երբ տեսեր են, թե պտուկին ճիրագուն չի հատնիր՝ ամաններ, դաշուններ բերելով իրեն հոն քաշեր են: Ցիշեալ տանն կանայք, իրենց սնտուկներուն վրայ, Սուլթան Մահմուտի 5-նոց և 6-նոց դրամէն դէզադէզ շարուած կը տեսնեն եղեր: Կը վերցնեն դրամները և հետևյալ օրն կը տեսնեն, որ դարձեալ շարուած է: Մէկը հաց կեռնի, կը տեսնէ, որ տունն հացով կը լեցուի և խմորն չսպառիր: Այսպես, աղեկնաք զանազան բարիք կը ընեն եղեր մարդոց: Պետք է գիտնալ, թե ո և իցե պարագայի մեջ, երբ աղեկնաքն շնորհ մ՚ընե, պեաք չէ բնաւ մարդու ասել, զի շատ մարդիկ երբ շնորհք մը

---

[78] *Գյոզալյան Գ., նշվ. աշխ., էջ 225:*
[79] *ԵԼ, հ. 3, էջ 211:*
[80] *ԵԼ, հ. 1, էջ 216:*
[81] *Նույնը:*
[82] *ԵԼ, հ. 2, էջ 178:*
[83] *ԵԼ, հ. 1, էջ 223:*
[84] *Նույն տեղում, էջ 220:*

վայելած են և մէկու մը յայտնած են՝ անմիջապես նոյն շնորհն դադրած և մինչև իսկ շնորհեալ դրամն ալ ետ առնուած է եղեր»[85]:

Կան բազմաթիվ առակներ, անեկդոտներ, սնահավատական զրույցներ[86], որտեղ ժողովուրդը մարդուն ներկայացնում է որպես խաբեբա, չափազանց ճարպիկ, հնարամիտ, այսինքն՝ «մարդը սատանին ջուրն է տանում, ծարավ հետ բերում»[87]: Այսպիսի զրույցներ հիմնականում պատմում են մոկացիների[88], կարբեցիների[89], հատկապես կարբեցի կանանց մասին, որոնց տալիս են «սատանա խաբող»[90] անունը:

Հաճախ բանասացները, բուն բանահյուսական նյութը հաղորդելուց բացի, կատարում են ինքնուրույն դատողություններ իրենց իսկ ավանդած նյութի կամ համընդհանուր հարցերի վերաբերյալ և այդ կարծիքները՝ որպես ելակետ, օգնում են ուսումնասիրողներին իրենց վերաբերմունքն արտահայտել ուսումնասիրվող նյութի վերաբերյալ: Մեր պարագայում բանասացը շատ համոզիչ կերպով պատմում է իր իսկ գլխով անցած իրադարձությունը, որը մեր կողմից դիտարկվում է որպես սնահավատական զրույց սատանայի, գոռնափշտիկի կամ մեկ այլ ոգու մասին, և հաջորդ բոպեին ասում, որ «Էն վախտ միամիտ էինք, ամեն ինչից վախենում էինք, մեր բոլոր տեսակի վախերը վերագրում էինք սատանաներին: Հըմի մարդն է սատանա դառել, խափում է, սուտ է խոսում, սատանան էլ ո՞ւրտից էրևա, մարդը սատանու փեշակը ձեռեն առել է: Ըդորից է, որ էն վախտ սատանա կար, հըմի չկա»[91]:

Նմանատիպ դատողություն է արել Յ. Ճանիկյանը դեռևս 1895թ. Ակնում բանահյուսական նյութեր գրառելիս. «Կ'ըսեն թե աղեկնաց սկզբնատրութիւնն յայտնի չէ: Թէ ի հնումն և թե այժմ կան. Պարզամիտ անձինքն կը սիրեն և անոնց միայն կ'երևան և զանազան շնորհ կ'ընեն. կ'ըսեն նաև, թե այժմ մարդիկ աւելի սատանայացած լինելով, աղեկնաքները չեն երևիր եղեր այլ ևս»[92]:

Սատանայի կերպարը լայնորեն տարածված է հայ ժողովրդական հեքիաթներում և բանաձևային բանահյուսության մեջ՝ առածներում[93], հանելուկներում[94] և այլն: «Սատանա» բառը հանդիպում ենք մի շարք տեղանուններում[95], որպես բնության տարերքի կամ երևույթի անվանում[96], նաև հայ ժողովրդական խաղերում[97]:

Մարդը, չկարողանալով բացատրել բնության այս կամ այն երևույթները, չկարողանալով հաղթահարել դրանց նկատմամբ ունեցած իր վախը, երևակայության մեջ ստեղծել է զանազան ոգիներ, նախապաշարմունք, սկսել է հետևել դրանց, վախենալ, զգուշանալ դրանցից, հավատալ, սրբացնել և այլն: Պատահական չէ, որ սնահավատական զրույցները մեծ մասամբ տարածված էին գյուղական բնակավայրերում, ուր

---

[85] Ճանիկեան Յ.Կ., նշվ. աշխ., էջ 152-153:
[86] ԵԼ, հ 1, էջ 222-223:
[87] Մալխասյանց Ստ., Առակներ, ավանդություններ, անեկդոտներ, № 58 (39), Եր., 1958, էջ 90:
[88] FF III:6299, Ա. Բարսեղյան, Սևան, 1961, Մոկսի բանահյուսությունը:
[89] FF II:15, Բդոյան Վ., 1945, Աշտարակ:
[90] Ս. Վարդանյանի գրառած նյութերից: Ասացող՝ Մարիամ Մովսիսյան, ծնվ.1987թ, 1-ին կուրսի ուսանողուհի: Սատանան տանում է կարբեցիների խոզերը: Մեկն ասում է սատանային, որ միայն իրենը տա, մյուսների հետ ինքը գործ չունի: Սատանայի այն հարցին, թե որն է իրենը, մարդը պատասխանում է, թե իր խոզի պոչը ոլորած է: Սատանան տեսնում է, որ բոլոր խոզերի պոչերը ոլորած են, բոլորն էլ վերադարձնում է:
[91] Մեր բանահյուսական գրառումներից, բանասաց՝ Բարսեղյան Շողակաթ, ծնվ. 1925թ., Շիրակի մարզ, գյուղ Կապս:
[92] Ճանիկեան Յ.Կ., նշվ. աշխ., էջ 153:
[93] Ղանալանյան Ա., Առածանի, Եր., 1960:
[94] Հարությունյան Ա., Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965:
[95] Ղանալանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 77, 218, 221, 406:
[96] ԱՀ, գ. IX, էջ 46:
[97] Բդոյան Վ., Հայ ժողովրդական խաղեր, Եր., 1980, էջ 60, 139-142:

աշխարհընկալման հետ կապված հարցերը բացահայտման ու պարզաբանումների կարիք ունեին: Ճանաչողության սահմանների ընդարձակման հետ մեկտեղ պակասում են նաև սնահավատական զրույցները:

ЧЕРТ В АРМЯНСКИ НАРОДНЫХ СУЕВЕРНЫХ РАССКАЗАХ

___ *Резюме* ___ ___ *А. Галстян* ___

В армянских народных суеверных рассказах черт-самый распространенный злой дух. Данная статья представляет функции черта по армянским народным суеверным рассказам. На основе фольклорных записей, собранных в последние годы, и опубликованных статьях, раскрывается и представляется внешний облик черта, его возраст, пол, быт, место обитания, способы излова в различных этнографических регионах.